Эривань. Учительская Семинарія. - Erivan. Séminaire.

Эривань. Учительская Семинарія. - Erivan. Séminaire.

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նվիրվում է
Երևանի պետական համալսարանի
պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան
պատմության թանգարանի հիմնադրման
60-ամյակին

Dedicated to the 60th anniversary of the
establishment of Yerevan State University
History Museum after Professor L. Gharibjanyan

ՀՏԴ 069:93/94
ԳՄԴ 79.1+63.3
Ե 813

Տեքստի հեղինակ՝ **Հեղինե Գասպարյան**
Խմբագիր՝ **Արթուր Իսրայելյան**
Թարգմանիչ՝ **Իշխան Դադյան**

Ե 813 Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2020.- 64 էջ:

Yerevan State University History Museum after Professor L. Gharibjanyan.– Yerevan: YSU Press, 2020.- 64 pages.

Գրքում ներկայացված է Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանի հիմադրման և զարգացման ընթացքը մինչև մեր օրերը: Լուսանկարներում արտացոլված են թանգարանի գործունեության տարբեր դրվագներ և հետաքրքիր ցուցանմուշներ:
The book features the establishment and development process of the History Museum of Yerevan State University up to the current moment. The photos depict various episodes from the activity of the museum as well as many interesting exhibits.

ՀՏԴ 069:93/94
ԳՄԴ 79.1+63.3

ISBN 978-5-8084-2442-5
© ԵՊՀ հրատարակչություն, 2020, YSU Press, 2020
© Գասպարյան Հ., 2020, H. Gasparyan, 2020

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ Լ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

YEREVAN STATE UNIVERSITY HISTORY MUSEUM AFTER PROFESSOR L. GHARIBJANYAN

ԵՐԵՎԱՆ ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN - YSU
PRESS 2020

Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանը Հայաստանի Հանրապետությունում գործող բուհական ամենամեծ և ցուցանմուշներով ամենահարուստ թանգարանն է: Դեռևս 1957 թ. Մայր բուհի հիմնադրման և անցած ուղու լիարժեք պատմությունը ներկայացնելու նպատակով անվանի իրավաբան, դասախոս Գրիգոր Չուբարյանը առաջ քաշեց համալսարանում թանգարան հիմնելու գաղափարը: ԵՊՀ ռեկտոր Գագիկ Դավթյանի հանձնարարությամբ՝ կուսկոմիտեի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը մեծ նվիրումով ձեռնամուխ եղավ թանգարանի հիմնադրման դժվարին գործին: Նա հավաքագրեց համալսարանի պատմությանը վերաբերող զգալի թվով արխիվային հին փաստաթղթեր՝

The History Museum of Yerevan State University is the biggest and richest among all university museums in Armenia. To introduce the entire history of the establishment of the Alma Mater and the path it has gone through, back in 1957 eminent lawyer Professor Grigor Chubaryan put forth the idea of founding a museum in the university. Upon the assignment of Rector Gagik Davtyan, First Secretary of the Communist Party Committee Ludvig Gharibjanyan committed himself to the responsible job of founding the museum. He collected a large number of archival documents related to the University's history and met with the kinsfolk of the greatest intellectuals and senior professors of Yerevan

միաժամանակ հանդիպելով ԵՊՀ երախտավորների հարազատներին, տարեց դասախոսների, գրի առավ նրանց հուշերը, ձեռք բերեց անձնական իրեր, լուսանկարներ, գրքեր և այլն:

Ռեկտորի 1960 թ. մարտի 22-ի հ. 5 որոշմամբ՝ ԵՊՀ պատմության թանգարանի հիմքը դրվեց: Սկզբում այն գործում էր որպես կաբինետ և տեղակայված էր համալսարանի առաջին շենքում (Աբովյան փ., 52): 1965 թ. կաբինետը տեղափոխվեց համալսարանի նորակառույց համալիրի կենտրոնական մասնաշենքի 5-րդ, հետագայում՝ 7-րդ հարկ:

1988 թ. պատմության կաբինետի հիմքի վրա, ԵՊՀ գիտահետազոտական մասի կազմում, ձևա-

State University, wrote down their memories as well as acquired some of their personal belongings, photos, books, etc.

Upon Decision № 5 of the Rector, dated May 22, the foundation of the History Museum of Yerevan State University was laid. Initially it was functioning as a study room and was located in the first building of the University (52 Abovyan). In 1965 it was relocated to the 5th, then later to the 7th floor of the central building of the newly constructed University complex.

In 1988 upon the basis of the history study room, the research laboratory of Armenia's higher education history with a museum adjacent to it was established in the

վորվեց Հայաստանի բարձրագույն կրթության պատմության ԳՀ լաբորատորիա՝ նրան կից թանգարանով:

1995 թ. հունվարի 1-ից թանգարանը դարձավ կառուցվածքային ինքնուրույն միավոր և կոչվեց Երևանի պետական համալսարանի պատմության թանգարան:

Թանգարանի տնօրեններ են եղել պատմ. գիտ. թեկն., պրոֆեսոր Լյուդվիգ Ղարիբջանյանը (1960–2006), պատմ. գիտ. թեկն., դոց. Ժակ Մանուկյանը (2006–2013): 2013 թվականից թանգարանը ղեկավարում է Հեղինե Գասպարյանը:

YSU section of scientific investigations.

On January 1, 1995 the museum became an independent infrastructural unit and was named the History Museum of Yerevan State University.

The museum has been headed by Professor Ludvig Gharibjanyan (1960-2006), PhD in Historical Sciences, Associate Professor Zhak Manukyan (2006-2013), PhD in Historical Sciences. Since 2013 Ms. Heghine Gasparyan, a great enthusiast for the rich history of Yerevan State University is at the head of the museum.

Լյուդվիգ Ղարիբջանյան
պատ. գիտ. թեկն., պրոֆեսոր,
թանգարանի հիմնադիր տնօրեն
(1960–2006)

Prof. Ludvig Gharibjanyan
Founding Director of the Museum
(1960–2006)

Ժակ Մանուկյան
պատ. գիտ. թեկն., դոցենտ,
թանգարանի տնօրեն
(2006–2013)

Assistant Prof. Zhak Manukyan
Director of the Museum
(2006–2013)

Հեղինե Գասպարյան
թանգարանի տնօրեն
(2013-ից մինչև այժմ)

Heghine Gasparyan
Director of the Museum
(2013–until present)

Սեդա Սարգսյան

Seda Sargsyan

Տնօրեն Լ. Ղարիբջանյանի և փոխտնօրեն Սեդա Սարգսյանի ջանքերով տարիների ընթացքում թանգարանը հարստացավ համալսարանի պատմությանը վերաբերող բազմապիսի հավաքածուներով ու արժեքավոր նյութերով:

Over the course of time great efforts were made by Director L. Gharibjanyan and the Vice-Director Seda Sargsyan, to enrich the museum with numerous new collections and valuable exhibits relating to the University's history.

2009 թ. բարենորոգված թանգարանը հարմարեցվեց ցուցադրությունների տրամաբանությանը և բացվեց նոր ցուցադրություն՝ մի քանի բաժիններով:

In 2009 the museum was renovated to fit the logic of exhibitions and a new exhibition with several sections was launched.

Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ գիտխորհրդի 2019 թ. սեպտեմբերի 2-ի հ. 1/1 որոշմամբ թանգարանի հիմնադրման և հետագա զարգացման գործում ունեցած անգնահատելի ավանդի համար թանգարանն անվանակոչվեց պրոֆեսոր Լյուդվիգ Ղարիբջանյանի անունով:

On the occasion of the centennial of the establishment of Yerevan State University, upon Decision № 1/1 of the Academic Council, dated September 2, 2019, the museum was named after Ludvig Gharibjanyan for his invaluable contribution to the establishment and further development of the museum.



Նելլի Գևորգյան
արխիվի վարիչ, ժող. վարպետ

Nelly Gevorgyan
Head of Archival Depository,
People's Master

Լիլիթ Ավետիսյան
ֆոնդապահ

Lilit Avetisyan
Keeper of Resources

Ամալյա Իսրայելյան
տեսաարխիվի տեսուչ

Amalya Israelyan
Manager of Video-Resources

Զարուհի Հովնանյան
օպերատոր

Zaruhi Hovnanyan
Operator

Թանգարանում առանձնապես կարևորվում է Մայր բուհի պատմությանը վերաբերող ցուցադրությունը, որը պատմում է ԵՊՀ կառուցվածքի, ֆակուլտետների, ռեկտորների, հիմնադիր դասախոսների ու երախտավորների, ուսանողական ակտիվ կյանքի, ինչպես նաև համալսարանի միջազգային համագործակցական կապերի մասին:

The primary focus of the museum is on the exhibition of the history of the Alma Mater, which explores the structure, faculties, rectors, founding professors, illustrious scientists of Yerevan State University and depicts the students' active life and the strong collaborative ties YSU shares with other universities overseas.

Յուրի Ղամբարյան

Yuri Ghambaryan

Մեսրոպ Տեր-Մովսիսյան

Mesrop Ter-Movsisyan

Նիկոլ Աղբալյան
Nikol Aghbalyan

Մանուկ Աբեղյան
Manuk Abeghyan

Գարեգին Հովսեփյան
Garegin Hovsepyan

Հակոբ Մանանդյան
Hakob Manandyan

Ստեփան Մալխասյանց
Stepan Malkhasyants

Դավիթ Զավրիյան
Davit Zavriyan

Երվանդ Տեր-Մինասյան

Yervand Ter-Minasyan

Սիրական Տիգրանյան

Sirakan Tigranyan

Աշխարհբեկ Քալանթար

Ashkharbek Kalantar

Ալեքսանդր Հակոբյան

Alexander Hakobyan

Ստեփան Ղամբարյան

Stepan Ghambaryan

Գրիգոր Ղափանցյան

Grigor Ghapantsyan

Գրիգոր Չուբարյան

Grigor Chubaryan



Արսեն Տերտերյան

Arsen Terteryan

Ավետիք Տեր-Պողոսյան

Avetik Ter-Poghosyan

Գուրգեն Էդիլյան

Gurgen Edilyan

Լևոն Լիսիցյան

Levon Lisitsian

Թանգարանում կարելի է ծանոթանալ նաև Հայաստանում բարձրագույն կրթության ձևավորման ընթացքին և ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների հիմքի վրա հանրապետությունում ստեղծված բուհերի մեծ մասի տարեգրությանը:

Ուշագրավ են Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան գոյապայքարում զոհված համալսարանականներին նվիրված ցուցավահանակները՝ լուսանկարներով, փաստաթղթերով, անձնական իրերով, ինչպես նաև նրանց մասին գրված գրքերով:

One can receive insight into how the higher education system evolved in Armenia and how most Armenian universities originated from the relevant faculties of Yerevan State University.

Particularly noteworthy are the exhibition banners honoring the memory of those YSU professors and students who fell during the Great Patriotic and the Nagorno-Karabakh Wars and the display cases featuring their photos, documents, personal belongings and books written in their memory.

ВСЕХ СТРАН

Թանգարանի ուսանողական անկյունում ներկայացված են ապրիլյան պատերազմի համալսարանական նորօրյա հերոսների լուսանկարները, որոնք ոգևորում են ուսանողներին, խթանում հերոսների սխրանքը գնահատելու նրանց ներքին մղումը, նրանց գիտակցության մեջ ամրագրում այն համոզմունքը, որ հայ զինվորը պատրաստ է դիմագրավելու հակառակորդի ցանկացած հարձակում:

The students' corner of the museum featuring the photos of the current heroes of Yerevan State University that took part in the April War in Karabakh aims to evoke patriotic feelings in students, make them value those heroes' daring deeds and embed into their psyche the conviction that the Armenian soldier is always ready to stand against any enemy's attacks.

Հետաքրքիր ցուցանմուշներով աչքի է ընկնում թանգարանի հնագիտության բաժինը, որը ձևավորվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից ստացված և ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության ու ազգագրության ամբիոնի հնագիտական արշավախմբերի պեղումներով հայտնաբերված բազմաթիվ գտածոների հիմքի վրա՝ քարի դարից մինչև միջնադար:

Նշված ամբիոնի կողմից թանգարանում հաճախ անցկացվում են մասնագիտական դասընթացներ, և ուսանողները ծանոթանում են Հայկական լեռնաշխարհի հնագիտական մշակույթներին: Այս ցուցանմուշները ոչ միայն ուսուցողական մեծ արժեք ունեն համալսարանի ուսանողների մասնագիտական

The archeological section of the museum stands out for its fascinating exhibits. Its establishment was based on artifacts from the Stone Age to the Middle Ages, donated to the museum by the Institute of Archaeology and Ethnography of the RA NAS and uncovered during the archeological campaigns conducted by the Department of Archeology and Ethnography of YSU Faculty of History.

The above-mentioned department often holds specialized seminars in the museum, familiarizing the students with the archaeological treasures of the Armenian Highlands. These exhibits are not only of didactic value in terms of helping to expand

Քրեղան, Միջին բրոնզի դար,
(Կարմիր-Բերդյան մշակույթ)
Ք.ա. 18-16-րդ դդ., Վերին նավեր

Jar, Middle Bronze Age
(Karmir-Berd Culture),
18-16th Centuries BC, Verin Naver

Գավաթ, Վաղ բրոնզի դար
(Շենգավիթյան մշակույթ),
Ք.ա. III հազարամյակ, I քառ.

Cup, Early Bronze Age
(Shengavit Culture),
First Quarter of the 3rd Millennium BC

Ուլունքաշար, Երկաթի դար,
Ք.ա. 8-6-րդ դդ.

Bead, Iron Age,
8-6th Centuries BC

գիտելիքների հարստացման առումով, այլև կարևոր են հայրենական և արտերկրի մասնագետների գիտահետազոտական ուսումնասիրությունների համար:

Իր գոյության 60 տարիների ընթացքում թանգարանը շարունակաբար համալրվում է համալսարանին և Հայաստանում բարձրագույն կրթության զարգացմանը վերաբերող բազմաթիվ նյութերով (լուսանկարներ, անձնական իրեր, արժեքավոր փաստաթղթեր, հնագիտական ու ազգագրական նմուշներ, կերպարվեստի գործեր, Արա Բեքարյանի, Հրաչյա Ռուխկյանի, Միեր Աբեղյանի, Հրանտ Թադևոսյանի, Յանիս Բրեկտեի և այլ անվանի նկարիչների ստեղծած գեղանկարներ, ԵՊՀ երախտավորների դիմանկարներ, ինչպես նաև

the university students' specialized knowledge, but are also crucial to the scientific research carried out by local and foreign experts.

Throughout the 60 years of its existence the museum has constantly been enriched with various materials (photos, personal belongings, valuable documents, artifacts, artworks, paintings by Ara Bekaryan, Hrachya Rukhkyan, Mher Abeghyan, Hrant Tadevosyan, Janis Brekte and other celebrated painters, portraits of the greatest minds of our university as well as autographed books, equipment, etc.).

In 2014 the collection of handwritten notes preserved in the museum was enriched with the original, exclusive handwritten

Հրանտ Թադևոսյան,«Կակաչներ»

Hrant Tadevosyan, “Poppies”



Սանկտ Պետերբուրգի գիմնազիայի 1900 թ. նվերը իր 13-ամյա սան Գրիգոր Ղափանցյանին

Books presented to 13-year-old Grigor Ghapantsyan, alumnus of St. Petersburg gymnasium in 1900

ընծայագրերով գրքեր, տեխնիկական սարքեր և այլն):

2014 թ. թանգարանի ձեռագրերի հավաքածուն հարստացավ ԵՊՀ առաջին ռեկտոր Յուրի Ղամբարյանի՝ 1885 – 1886 թթ. Մոսկվայի համալսարանում կարդացած դասախոսությունների եզակի ձեռագիր օրինակով (164 էջ):

copy of the first YSU Rector Yuri Ghambaryan's lectures (164 pages), delivered at Moscow State University during the period of 1885-1886.



Երևանի համալսարանի հիմնադրման մասին օրենքը

The Law on Establishing Yerevan University

ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին ընդառաջ թանգարանը համալրվեց համալսարանին և Հայաստանում բարձրագույն կրթության զարգացմանը վերաբերող բազմաթիվ նոր նյութերով: Ցուցադրվեցին այնպիսի եզակի նմուշներ, ինչպիսիք են.

- Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 16-ին ընդունած Երևանի համալսարանի հիմնադրման մասին օրենքը,
- կազմակերպիչ հանձնաժողովի նիստերի սղագրություններն ու արձանագրությունները,
- Երևանի համալսարանի առաջին կանոնադրությունը, առաջին դասացուցակը, բազմաթիվ հին փաստաթղթեր,
- ԵՊՀ առաջին հրատարակությունը Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ականավոր փիլիսոփա, հոգեբան Ուիլյամ Ջեյմսի՝ 1920 թ. Ալեքսանդրապոլի «Շիրակ» տպարանում լույս տեսած «Հոգեբանութիւն» դասագրքի առաջին պրակը (ԵՊՀ առաջին դասախոսներից մեկի՝ իրավաբան, հոգեբան Սիրական Տիգրանյանի թարգմանությամբ),
- Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի, «Ձեռագրական սրբագրութիւններ հայ մատենագիրների մէջ» գրքի, Լեոյի «Անի» աշխատության, Հովհաննես Նավակատիկյանի «Վերլուծական երկրաչափություն» դասագրքի, Հարություն Անժուրի երկու դասախոսության ձեռագիր օրինակները, նաև Գևորգ Ասատուրի բազմաթիվ ձեռագրեր,
- դասախոսների՝ համալսարանին վերաբերող ձեռագիր հուշեր:



ԵՊՀ առաջին կանոնադրությունը
The YSU first Charter



ԵՊՀ առաջին դասացուցակը
The YSU first time-table

Towards the centennial of the establishment of Yerevan State University, the museum was supplemented by numerous new materials relating to the university and evolution of the higher educational system in Armenia. Exceptional specimens were displayed:

- the Law on the Establishment of Yerevan State University, adopted by the Council of Ministers of the First Republic of Armenia on May 16, 1919;
- the minutes of the meetings convened by the Organizing Committee;
- the first Charter of Yerevan University, the first curriculum and many other documents of olden days;
- the first YSU publication: an installment of the textbook *"Psychology"* by Harvard University Professor, prominent philosopher, psychologist William James (translated by Sirakan Tigranyan, one of the first YSU professors, lawyer, psychologist) ;
- the handwritten copies of *The Armenian Etymological Dictionary*, as well as the "*Proofreading Corrections in the Publications of Old Armenian Manuscripts"* by Hrachya Acharyan, the book *Ani* by Leo, the textbook *Analytic Geometry* by Hovhannes Navakatikyan, two of Harutyun Anzhur's handwritten lectures as well as many handwritten works by Gevorg Asatur;
- YSU professors' handwritten memoirs about the university;



ԵՊՀ առաջին հրատարակությունը

The first publication of YSU



Հր. Աճառյանի «Արմատական բառարան»-ի ձեռագիր օրինակը

The handwritten copy of *The Armenian Etymological Dictionary* by Hr. Acharyan

- Ստեղծվեց 1930-ականներին բռնաճնշումների ենթարկված համալսարանականների անկյուն, որտեղ ներկայացված են բացառիկ տեղեկություններ նրանց մասին՝ ՀՀ ազգային արխիվի նյութերի հիման վրա:
- Բացվեց նոր ցուցասրահ, որտեղ ամփոփված են տարբեր այցելությունների առթիվ ԵՊՀ հյուրերից ստացված բազմաթիվ հուշանվերներ:

- A separate corner in the museum is dedicated to the memory of those YSU professors and graduates who suffered political repression during the Great Purge back in the 1930s. It provides exclusive information elicited from the National Archives of Armenia;
- A new exhibition hall featuring the gifts given to YSU by its guests on many different occasions was also launched.

5000-ամյա կաշվե կոշիկի կրկնօրինակը

The replica of the 5000 year-old leather shoe

«Ձեռագրի մակետ. Գլաձոր, XIII դար»

“Replica of Manuscript – Gladzor, XIII c.”

Թանգարանի այցելուներին առանձնապես հետաքրքրում են «Ձեռագրի մակետ. Գլաձոր, XIII դար» ցուցանմուշը, Արենի-1 քարանձավում 2008 թ. հայտնաբերված 5000-ամյա կաշվե կոշիկի կրկնօրինակը, որը համալսարանին է նվիրել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի առիթով, ռեկտորի առանձնասենյակի ավելի քան 100 տարվա պատմություն ունեցող աշխատասեղանն ու աթոռը, որի շուրջ աշխատել են ԵՊՀ գրեթե բոլոր ռեկտորները, համալսարանի պրոֆեսոր, ֆիզիկոս Հարություն Անժուրի անձնական ֆիզիարմոնը, որը, մասնագետի հավաստմամբ, XIX դարի գործիք է և այսօր էլ գործում է անխափան:

The visitors to the museum show special interest in the exhibit “Replica of Manuscript – Gladzor, XIII c.”; the replica of the 5000 year-old leather shoe discovered in the Areni-1 cave complex in 2008 (presented to YSU by the RA National Academy of Sciences on the occasion of the centennial of the establishment of Yerevan State University); the over 100 year- old desk and chair of the rector’s study room which have been used by almost all YSU Rectors; YSU professor, physicist Harutyun Anzhur’s pump organ, which as claimed by experts dates back to the XIX century and continues to function.

Ռեկտորի աշխատասեղանը և աթոռը

Desk and chair of the Rector

Հարություն Անժուրի ֆիզհարմոնը

Harutyun Anzhur's pump organ

Թանգարանը պարբերաբար կազմակերպում է ժամանակավոր և շրջիկ թեմատիկ ցուցադրություններ, ճանաչողական դաս-էքսկուրսիաներ, կլոր սեղան-քննարկումներ, համալսարանական զոհված ազատամարտիկներին նվիրված միջոցառումներ: Հատկապես շատ ոգևորիչ էր 2014 թ. «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի հետ համատեղ կազմակերպված՝ Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձին նվիրված միջոցառումը, որին իրենց մասնակցությունն էին բերել Շուշիի ազատագրման օպերացիայի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոսը), ազատամարտիկներ՝ փոխգնդապետ Միքայել Միրզոյանը (Բեկ), Իգոր Սարգսյանը, Գագիկ Գինոսյանը, համալսարանա-

Sometimes the museum organizes temporary and travelling thematic exhibitions, didactic excursions, round-table discussions and events in memory of the YSU freedom-fighters. Especially inspiring was the event dedicated to the 22nd anniversary of the Liberation of Shushi, held in 2014 in collaboration with the Military-Patriotic Club "Vardanank". The event was honored by the presence of Major General Arkady Ter-Tadevosyan (Komandos), commander of the operation to liberate the town of Shushi; such freedom-fighters as Lieutenant Mikael Mirzoyan (Bek); Igor Sargsyan; Gagik Ginosyan; the mothers and relatives of those YSU freedom-fighters who fell victims in the defence of the sacred necessity of freedom. They recounted heartwarming stories about the

կան զոհված ազատամարտիկնե-
րի մայրեր, հարազատներ: Նրանք
միջոցառման մասնակիցներին
ներկայացրին արցախյան հերոս-
ների գործած սխրանքների հուզիչ
պատմություններ, որոնք հայրենա-
սիրության յուրօրինակ դասեր էին
հատկապես ուսանողների համար:

heroism undertaken by the soldiers
of the Nagorno-Karabakh War,
and this served as a unique lesson
especially for the students.

Քննարկում «Բուհական թանգարանների համագործակցություն» թեմայով, 2011 թ.

Round-Table Discussion “Cooperation of University Museums”, 2011

Ուշագրավ էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բաց դասը «Համալսարանի հիմնադրումը որպես հայ ժողովրդի հետցեղասպանական հոգևոր վերածնունդ» խորագրով, որի ընթացքում ուսանողներին ներկայացվեց Երևանի համալսարանի հիմնադրման կարևորությունը Հայոց ցեղասպանությանը հաջորդող պատմական ժամանակաշրջանում: Մեծ հետաքրքրությամբ ընդունվեց նաև լուսանկարների ցուցադրությունը՝ «Էրգիրը տիրոջ աչքերով» խորագրով:

The open lesson entitled *"Establishment of the University as the Spiritual Rebirth of the Armenian People after the Genocide"*, dedicated to the centenary of the Armenian Genocide, should be specially highlighted. The importance of the establishment of Yerevan State University in the historical period following the Armenian Genocide was explained to the students. The collection of photographs entitled *"The Land through the Eyes of the Owner"* exhibited on this occasion was also accepted with great interest.





Ուսանողները մեծ ոգևորությամբ մասնակցեցին ՀՀ անկախության 25-րդ տարեդարձի առթիվ թանգարանի 2016 թ. կազմակերպած «Մայր բուհը և մենք ....» խորագրով ուսանողական ինտելեկտուալ մրցույթին և արժանացան մրցանակների ու հավաստագրերի:

2019 թ. ԵՊՀ պատմության թանգարանը Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի և ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հովի. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի հետ համատեղ կազմակերպեց արտերկրում մեծ ճանաչում ունեցող անվանի երկրաբան Լեոնիդ Սպենդիարովի ծննդյան 150-ամյակին նվիրված ցերեկույթ, որն էլ ավելի ամրացրեց միջթանգարանային համագործակցային կապերը:

In 2016 an intellectual contest for the students called *"The Alma Mater and Us"* was organized by the museum on the occasion of the 25th anniversary of the independence of the Republic of Armenia. The students participated in the contest with great enthusiasm and received prizes and certificates.

In 2019 the History Museum of Yerevan State University, in collaboration with the Alexander Spendiaryan House-Museum and the Geological Museum after H. Karapetyan of the Institute of Geological Sciences of the RA NAS, held a special event dedicated to the 150th anniversary of internationally recognized geologist Alexander Spendiarov. The event paved a way for further cooperation among the museums.

100

2019 թ. սեպտեմբերին մեծ շուքով նշվեց Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակը: Այդ առիթով համալսարանը հյուրընկալեց աշխարհի տարբեր երկրներից ժամանած ավելի քան 40 պատվիրակությունների, կազմակերպեց բազմաբնույթ միջոցառումներ, միջազգային գիտաժողովներ: Հյուրերը այցելեցին նաև թանգարան, որտեղ ծանոթացան Մայր բուհի պատմությանը և իրենց հիացմունքի խոսքերը թողեցին թանգարանի տպավորությունների գրքում:

Թանգարանում զբաղվում են նաև ԵՊՀ պատմությանը, անվանի դասախոսների կյանքին ու գործունեությանը, Արցախյան գոյամարտում զոհված համալսա-

In September 2019 the centennial of the establishment of Yerevan State University was marked with great splendor. On this occasion the University hosted over 40 delegations from all across the globe. Various celebratory events and international scientific conferences were held. The guests also visited the History Museum of Yerevan State University, got acquainted with the history of the Alma Mater, shared their impressions and expressed their heartfelt thanks in the Book of Impressions of the museum.

It should be noted that the museum also serves as a venue for research into the history of Yerevan State University, the life and scientific activity of eminent professors, and materials related

100
100

1

1

2

3

ռանական ազատամարտիկներին վերաբերող նյութերի ուսումնասիրությամբ, որի արդյունքում հրատարակվել են Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը (1919 – 1930 թթ.)» (Եր., 1965, 1994, ռուս. թարգմ. 1971), «Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919 – 1999 թթ.)» (Եր., 1999, կազմող՝ Լ. Ղարիբջանյան), «Մեր անվանի դասախոսները»

to YSU freedom-fighters who fell in battles in defence of Nagorno-Karabakh. As a result several books have been published: "*Yerevan State University (1919-1930)*" (Yerevan, 1965, 1994, Russian trans. 1971) by L. Gharibjanyan; *"Rectors of Yerevan State University (1919-1999)* "(Yerevan, 1999, compiled by L. Gharibjanyan); *"Our Prominent Professors"* (vol. 2: Yerevan, 2006,

4

4

4

1 Ուսանողական մրցույթ «Մայր բուհը և մենք» խորագրով
Students' contest "Alma Mater and Us"

2 «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները
Members of the Military-Patriotic Club "Vardanank"

3 Գեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոսը) և փոխգնդապետ Միքայել Միրզոյանը (Բեկ) թանգարանում
General-Lieutenant Arkadi Ter-Tadevosyan (Comandos) and Lieutenant-Colonel Mikayel Mirzoyan (Bek) at the Museum

4 Դրվագներ Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձին նվիրված միջոցառումից
Celebrating the 22nd anniversary of the Liberation of Shushi

(հ. 2, Եր., 2006, հ. 3, Եր., 2009, կազմողներ՝ Լ. Ղարիբջանյան, Հ. Գասպարյան), «ԵՊՀ կենսագրական հանրագիտարանը» (Եր., 2009, լրամշակված՝ Եր., 2019), «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն» (Եր., 2009, կազմող՝ Ժ. Մանուկյան), «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում» (Եր., 2011, կազմող՝ Ժ. Մանուկյան) գրքերը:

vol. 3: Yerevan, 2009, compiled by L. Gharibjanyan, H. Gasparyan); *"YSU Biographic Encyclopedia"* (Yerevan, 2009, 2019); *"Yerevan State University: Chronicle"* (Yerevan, 2009, compiled by Zh. Manukyan); "*Yerevan State University in the Artsakh War"* (Yerevan, 2011, compiled by Zh. Manukyan).

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
100
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ
100

Համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ 2018 թ. Հ. Գասպարյանի աշխատասիրությամբ հրատարակվեց «Երևանի պետական համալսարանի պատմությունից» գիրք-ալբոմը, որտեղ ներկայացված են ԵՊՀ պատմության հիշարժան էջեր նրա հիմնադրումից մինչև մեր օրերը, համալսարանի կարևոր ձեռքբերումները հանրապետության կրթության, գիտության և մշակույթի զարգացման ոլորտներում:

On the occasion of the centennial of Yerevan State University, in 2018, the book-album “A Glimpse of Yerevan State University History” was published by H. Gasparyan’s efforts, exploring the memorable chapters of YSU history since its establishment, the important breakthroughs the University has achieved in the fields of education, science and culture.

Դպրոցականները թանգարանում, 2004 թ.

Schoolchildren at the Museum, 2004

Հյուրերը թանգարանի ուսանողական անկյունում, 2018 թ.

The guests at the Students' Corner of the Museum, 2018

Թանգարանն ամեն տարի հյուրընկալում է առաջին կուրսի ուսանողներին և հանրակրթական դպրոցների աշակերտների, նրանց ծանոթացնում համալսարանի պատմությանը, երախտավորներին, անվանի շրջանավարտներին, որոնք հետագայում գիտության բնագավառում լայն ճանաչում են ձեռք բերել ոչ միայն մեր հանրապետությունում, այլև միջազգային ասպարեզում: Այս ավանդույթը նպաստում է ուսանողներին սիրելու Մայր բուհը, բարձր պահելու «համալսարանական»-ի կոչումը, իսկ դպրոցականներին օգնում՝ մասնագիտական կողմնորոշման և կյանքի ճիշտ ուղի ընտրելու հարցում:

Every year the University hosts freshmen and high-school students, familiarizing them with YSU history, the greatest minds and graduates who have risen to fame in the field of science and who enjoy tremendous popularity worldwide. This tradition instills love in the students, enhances their evaluation of the Alma Mater and adds to their understanding of the honorary title of a YSU student. It also supports students from schools in clearly understanding of their future choice of speciality.

1920 թ. մարտի 31. Շաբաթ

ԳԻՆԸ ԱՌԱՆՑ Լ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ առաջին թերթը

The first newspaper of YSU

Թանգարանը համագործակցում է ՀՀ բուհական թանգարանների, ԵՊՀ ֆակուլտետների, ՀՀ ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ, որի շնորհիվ վերականգնվել են մի շարք կարևոր փաստաթղթեր ու առարկաներ:

The museum closely cooperates with the university museums in Armenia, YSU faculties, the National Archives of Armenia, the Institute of Archaeology and Ethnography of the RA NAS. Due to this collaboration, a number of important documents and items have been restored.



Թանգարանի բազմաթիվ այցելուներ՝ աշակերտներ, ուսանողներ, հյուրեր, ինչպես մեր հանրապետությունից, այնպես էլ արտերկրից, մեծ հետաքրքրությամբ են ծանոթանում Մայր բուհի պատմությանը և իրենց գրառումները թողնում տպավորությունների գրքում:

The visitors to the YSU History Museum – schoolchildren, students, local and foreign guests, show a keen interest in the history of Yerevan State University and write down words of appreciation in the Book of Impressions.

Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլլսը թանգարանում, 2018 թ.

Richard M. Mills, the Extraordinary and Plenipotentiary Ambassador of USA to Armenia at the Museum, 2018

Թանգարանի աշխատակիցները դիմավորում են հյուրերին, 2019 թ.

The staff of the Museum, meeting the guests, 2019

Եվրասիական ազգային համալսարանի պատվիրակությունը թանգարանում, 2011 թ.

The deligation of the Eurasian National University at the Museum, 2011

Հյուրերն իրենց գրառումներն են թողնում տպավորությունների գրքում

Guests are taking notes in the Book of Impressions



Թանգարան կատարած մեր այցելությունից ստացանք մեծ բավականություն և անմոռաց տպավորություններ: Մեզ շատ դուր եկավ Հայաստանի կրթական համակարգի ստեղծման պատմությանը վերաբերող բաժինը, իսկ համալսարանի ֆակուլտետներին ծանոթանալը մեծապես օգտակար կլինի մասնագիտության ընտրության հարցում:
Հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը թանգարանը հիմնադրողներին:

05.11.1984
Ա.Ս.Պուշկինի անվան դպրոցի 10-րդ դասարանցիներ

We wish to express our deep gratitude to the founders of this museum for their endeavors. We really took great pleasure in the tour of the museum, memories we will cherish forever. We particularly enjoyed the section featuring the history of tertiary education of Armenia. The insight that the guide gave us into the faculties of the University was genuinely of great help for us as school graduates who now must choose a future profession.

05.11.1984
10th grade pupils from A.S. Pushkin school



Շնորհավորում եմ ձեզ ձեր դարավոր և ինքնատիպ պատմության համար: Երևանի պետական համալսարանի 100-ամյակը կարևոր և տպավորիչ ձեռքբերում է: Նրա անցած ուղու պատմությունը լուսաբանվում է այս հրաշալի թանգարանում:

26.09.2019
Դոկտորներ Գլեն Սիթոմա,
Քեթրին Լիբալ,
Հեդեր Էլիոթ-Ֆամուլարո
Կոնեկտիկուտի համալսարան
ԱՄՆ



I really enjoyed my visit. I think it was an important focus of history concerning both YSU and Armenia. I am very impressed by the wonderful collections concerning the Armenian history and beyond.
Thanks for giving us the opportunity of visiting such treasures.
Alessandra Ogli (Professor of Linguistics - Ca' Foscari University of Venice, Italy)
12-9-2019

Ինձ համար մեծ հաճույք է այցելել Երևանի պետական համալսարանի թանգարան, որտեղ լուսաբանվող պատմությունը կարևոր մասն է համալսարանի և Հայաստանի: Մեծապես տպավորված եմ հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հետաքրքիր փաստերով: Շնորհակալ եմ այս օջախն այցելելու հնարավորության համար:

12.09.2019
Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարան
պրոֆեսոր Ալեսանդրա Ջիորջի



С большим интересом ознакомился с замечательным музеем Ереванского государственного университета.
Желаю успехов профессорско-преподавательскому составу и студентам университета успехов в развитии нашей советской науки.
Маршал авиации
Г.П. Скорников
генерал-лейтенант авиации
(Степан Александрович Микоян)
28.04.87

Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանի ցուցանմուշներին ծանոթացա մեծագույն հետաքրքրությամբ:
Մաղթում եմ, որ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը իրենց հաջողություններով նպաստ բերեն սովետական գիտության զարգացման գործին:

28.04.1987
Ավիացիայի մարշալ Գ.Պ. Սկորիկով
Ավիացիայի գեներալ-լեյտենանտ Ս.Ա. Միկոյան

It was a great pleasure to take a guided tour around the History Museum of Yerevan State University and gain insight into the artifacts and exhibits there.
I wish YSU professors and students all success in developing Soviet science.

28.04.1987
Air Marshal G.P. Skorikov
Colonel-Lieutenant S.A. Mikoyan



С большим интересом и удовольствием посетила замечательный Музей ЕГУ и прослушала прекрасно проведенную экскурсию с подробным рассказом об истории университета, его выдающихся людях и о самом музее.

Большое спасибо!

Ахян Микоян (Москва Московский государственный университет им. Ломоносова)

12.09.2019

Մեծագույն հետաքրքրությամբ այցելեցի ԵՊՀ պատմության հրաշալի թանգարանը և մեծ բավականությամբ լսեցի էքսկուրսավարի հիանալի ներկայացրած դրվագները համալսարանի պատմության, նրա երախտավորների և թանգարանի մասին:

12.09.2019
Աշխեն Միկոյան
Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետական համալսարան

It was a great pleasure to visit the History Museum of Yerevan State University. I absolutely enjoyed the splendid tour there with the guide telling interesting stories about the university, its celebrated people and the museum itself.

12.09.2019
Ashkhen Mikoyan
Lomonosov Moscow State University



I was genuinely honored to get acquainted with the history of the first Armenian national university - our beloved Yerevan State University and the priceless relicts of great historical value housed in the YSU History Museum. Thank you very much for the great job you are doing. I wish the best of luck to this museum and greater creative heights to its tireless employees.

30.05.1986
Head of the Department of Yerevan History Museum.


Un musée très important, lieu de mémoire pour l'université mais aussi fenêtre sur l'histoire de la culture arménienne qui ne peut qu'émouvoir celui qui aime l'Arménie

Pierre Morel
Arménologue et historien
29/32 Route de Lille
59420 BAILLEUL FRANCE

Սա շատ կարևոր թանգարան է, համալսարանի հուշերի վայր, միաժամանակ դեպի հայկական մշակույթ բացվող պատուհան, որը չի կարող չհուզել նրան, ով սիրում է Հայաստանը:

2013 թ.
Պատմաբան, պրոֆեսոր, Պիեռ Մորել
Ֆրանսիա

This museum is of great value. It is a repository of memories about YSU and a window to Armenian culture which cannot but stir the feelings of those who love Armenia.

2013
Historian, Professor Pierre Morel
France



Prof. Giorgi Khubua
Rector of the Tbilisi State University
3. October, 2009

Հիացած եմ ԵՊՀ գիտնականների ձեռքբերումներով ու հաջողություններով: Ուրախ եմ Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև համագործակցության և բարեկամական կապերի ամրապնդման համար:
Երևանի պետական համալսարանի ռեկտորը իմ լավագույն ընկերն է և ես հպարտանում եմ դրանով:
Շնորհավորում եմ ԵՊՀ 90-ամյա հոբելյանի առթիվ և մաղթում մեծ հաջողություններ ի փառս հայ ժողովրդի և Հայոց պետության:

03.10.2009
Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր,
պրոֆեսոր Գիորգի Խուբուա

I am amazed by the scientific achievements and success that YSU has attained. I am rejoicing at the collaborative and friendly ties between Yerevan State and Tbilisi State Universities. The YSU Rector is a good friend of mine, a fact that makes me feel proud.
So I congratulate YSU on its 90th anniversary and wish the University great heights and resounding success to the glory of the Armenian nation and the Armenian State.

03.10.2009
Rector of Tbilisi State University,
Professor Giorgi Khubua

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐ Լ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Սրբագրիչ՝ Գայանե Գրիգորյան

Չափսը՝ 200x200 մմ
Թուղթը՝ կավճապատ 150 գր
Տպագրական 4 մամուլ
Տպաքանակը՝ 500

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Տպագրված է «Անտարես» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Մաշտոցի 50ա/1

/ysu.am
/YSU official